# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 օգոստոսի 2022 թվականի N 338-Ա**

### «ՇՈՒՌՆՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԼԱԲԵԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ս. Գրիգորյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. 2022 թվականի օգոստոսի 29-ից լուծել «Շուռնուխի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմենակ Լալաբեկյանի հետ 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված N 61 աշխատանքային պայմանագիրը՝ գործողության ժամկետը լրանալու պատճառով:

2. 2022 թվականի օգոստոսի 29-ից «Շուռնուխի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Սոնա Գրիգորյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մանակցի կողմից զբաղեցնելը:

29.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** — **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. օգոստոսի 26
ք. Կապան